ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1661 - Ա **26 մարտի 2009թ.**

ՆՈՐ ԱՐԵՇԻ 22-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 79/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՀԱՐ ՍՊԱՐՏԱԿԻ ՎԱՆՅԱՆԻ, ԼՅՈՒՍԻԿ ԵԳՈՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ԼՅՈՎԱ ՊԱՎԵԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ՍՈՒՐԵՆ ՊԱՎԵԼԻ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ, ՍԱՄՎԵԼ ԱԼԲԵՐՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ՀԱՄԼԵՏ ԱԼԲԵՐՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ԳԱԳԻԿ ԱԼԲԵՐՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Գոհար Սպարտակի Վանյանի (ծնված 27.02.1956թ.), Լյուսիկ Եգորի Խաչատրյանի (ծնված 00.00.1924թ.), Լյովա Պավելի Խաչատրյանի (ծնված 25.12.1954թ.), Սուրեն Պավելի Խաչատուրյանի (ծնված 18.02.1959թ.), Սամվել Ալբերտի Խաչատրյանի (ծնված 14.01.1990թ.), Համլետ Ալբերտի Խաչատրյանի (ծնված 26.10.1978թ.), Գագիկ Ալբերտի Խաչատրյանի (ծնված 19.12.1979թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Նոր Արեշի 22-րդ փողոցի հ.79/1 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 500.63քմ, որից 350քմ մակերեսով հողամասը Գոհար Սպարտակի Վանյանին, Լյուսիկ Եգորի Խաչատրյանին, Լյովա Պավելի Խաչատրյանին, Սուրեն Պավելի Խաչատուրյանին, Սամվել Ալբերտի Խաչատրյանին, Համլետ Ալբերտի Խաչատրյանին, Գագիկ Ալբերտի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (վկայական տրված 15.09.1995թ. հ.1246): Օրինական հողամասին կից օգտագործվող 150.63քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, 20.03.2008թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման 29.10.2008թ. հ.9626, Երևանի քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲԸ-ի 18.03.2009թ. հ.20/2-Ե/122 գրությունները, Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՊՓԲԸ-ի 06.03.2009թ. հ.20-Ել-1567 եզրակացությունը, համաձայն որի Նոր Արեշի 22-րդ փողոցի հ.79/1 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով «Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Նոր Արեշի 22-րդ փողոցի հ.79/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Գոհար Սպարտակի Վանյանի, Լյուսիկ Եգորի Խաչատրյանի, Լյովա

Պավելի Խաչատրյանի, Սուրեն Պավելի Խաչատուրյանի, Սամվել Ալբերտի Խաչատրյանի, Համլետ Ալբերտի Խաչատրյանի, Գագիկ Ալբերտի Խաչատրյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 350քմ մակերեսով հողամասին կից 150.63քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 150.63քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Նոր Արեշի 22-րդ փողոցի հ.79 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Նոր Արեշի 22-րդ փողոցի հ.79/1 տուն»։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Գոհար Սպարտակի Վանյանի, Լյուսիկ Եգորի Խաչատրյանի, Լյովա Պավելի Խաչատրյանի, Սուրեն Պավելի Խաչատուրյանի, Սամվել Ալբերտի Խաչատրյանի, Համլետ Ալբերտի Խաչատրյանի, Գագիկ Ալբերտի Խաչատրյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Էրեբունի թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**